ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լևոն Ալթունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Պրահա, Չեխիայի Հանրապետություն, հուլիսի 17-19-ը, 2017թ.

4. Հրավիրող կողմը

Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Հանդիպում Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարի հետ՝ քննարկելու առողջապահության բնագավառում հայ-չեխական համագործակցության զարգացման հնարավորությունները, մասնակցություն «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ - «Չինաստան՝ ներդրումային համաժողով 2017» միջոցառմանը:

6. Քննարկված թեմաները

Չեխիայի առողջապահության նախարար Մ. Լյուդվիկի հետ քննարկվել են առողջապահության բնագավառում Հայաստան-Չեխիա համագործակցության զարգացման նոր ուղղությունները, հատկապես շեշտադրելով առողջապահության կազմակերպման ու կառավարման ժամանակակից միտումներին հետևելու նպատակով փոխօգնության կազմակերպման հարցերը, մասնագիտական, կրթական, գիտական ու տեխնոլոգիական ոլորտներում փորձի և կարողությունների փոխանցման հնարավորությունները, ՀՀ առողջապահական վիճակագրական

համակարգի բարելավման, ինչպես նաև հիվանդանոցների կառավարման, հիվանդանոցաշինության ժամանակակից մեթոդների ներդրման հարցերում Չեխիայի փորձի ուսումնասիրության ու Չեխիայի կողմից հնարավոր աջակցության ուղիները: Չեխիան կարևոր գործընկեր է նաև Հայաստանում մատուցվող բուժօգնության ծառայությունների, մասնավորապես՝ արյունաբանական, մանկաբուժական ծառայությունների բարելավմանը նպաստելու առումով: Առաջարկվեց, որ չեխական կողմի աջակցությամբ արյունաբանության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում հայ բժիշկների ու մասնագետների վերապատրաստումը շարունակական բնույթ կրի:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների մասնակցությամբ մյուս միջոցառումը՝ «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ - «Չինաստան ներդրումային համաժողով 2017»-ը, լավ հնարավորություն էր թե՛ Եվրոպայի, թե՛ Չինաստանի հետ փոխգործակցության ամրապնդման, ներդրումային ծրագրերի համատեղ քննարկման համար: Ընդգծվեց, որ Հայաստանը կարող է կամուրջ հանդիսանալ մի կողմից՝ նշված երկրների, մյուս կողմից՝ Եվրասիական տնտեսական միության երկրների ու Իրանի Իսլամական Հանրապետության միջև:

Միջոցառման ընթացքում քննարկվել են Չինաստանի կողմից առաջարկվող ներդրումային ծրագրերը, Չինաստան-Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ համագործակցության լայն շրջանակ մեր երկրի մուտք գործելու հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել Հայաստանի հետ չինական ավանդական բժշկության ասպարեզում համագործակցության, դեպի Հայաստան բժշկական տուրիզմի խթանման, ինչպես նաև հայ մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման հարցերին: Ավանդական չինական բժշկությունը հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի համար որպես նոր, արդյունավետ ու մատչելի ուղղություն՝ առողջ ապրելակերպի պահպանման ու խթանման տեսանկյունից:

Հեռանկարային զարգացում ունի առողջապահության բնագավառում էներգախնայողական համակարգերի կիրառումը: Նախատեսվում է արևային կայանների արտադրությամբ զբաղվող չինական ընկերություններին առաջարկել դիտարկել հանրային-մասնավոր համագործակցության հնարավորություն՝ Հայաստանի բժշկական հաստատություններում արևային կայաններ տեղադրելու նպատակով:

Չինական կողմը նշեց, որ Չինաստանում բազմաթիվ են քրիստոնյաները, որոնք նախընտրում են այցելել քրիստոնեական պատմական ավանդույթներ ունեցող երկրներ և, օգտվելով առիթից, նաև ծանոթանալ այդ երկրում գործող ավանդական բժշկության համակարգին: Հայաստանը ևս կարող է իր բուժական ծառայություններն առաջարկել չինացի զբոսաշրջիկներին:

Քննարկման առարկա դարձավ նաև Հայաստանում չինական ավանդական բժշկական կենտրոնի ստեղծման հնարավորության հարցը:

Համաժողովին մասնակցել են Չինաստանի ու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 16 երկրի բարձրաստիճան քաղաքական գործիչներ, դիվանագետներ և գործարարներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ են կայացել Չեխիայի առողջապահության նախարարի, նրա տեղակալների, Չեխիայի Հրադեկ Կրալովե շրջանի ղեկավարի տեղակալի, Չեխիայի, ԵՄ երկրների և Չինաստանի բազմաթիվ այլ պաշտոնյաների ու գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ:

Հրադեկ Կրալովե շրջանի ղեկավարի տեղակալ Ալեշ Ցաբիցարի հետ քննարկվեց առողջապահության ոլորտում Հայաստանի և Չեխիայի միջև ստորագրված միջգերատեսչական համաձայնագրի շրջանակում Հրադեկ Կրալովե շրջանի և ՀՀ Տավուշի մարզի միջև համագործակցության նոր ծրագիր ստեղծելու հարցը: Մասնավորապես չեխական կողմը նախատեսում է բժշկական

սարքավորումներ (այդ թվում՝ մագնիսառեզոնանսային շերտագրման սարքավորում) և պարագաներ նվիրաբերել Տավուշի և հարակից մարզերի բժշկական հաստատություններին:

Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը այցելել է Պրահայի արյունաբանության և արյան փոխներարկման ինստիտուտ և «Մոտոլ» համալսարանական կլինիկա, ծանոթացել վերջիններիս մասնագիտական ու գիտական ներուժին, քննարկել առաջիկա երկկողմ համագործակցության ուղիները:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարի հետ կոնկրետ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին վերը նկարագրված բոլոր ուղղություններով համագործակցելու շուրջ:

Եվրամիության և Չինաստանի գործընկերների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն կողմերը ջանքեր կներդնեն երկկողմ ու բազմակողմ կապերը գործնականորեն կիրառելու ուղղությամբ: Քննարկված գործարար նախաձեռնությունները կարող են նոր շունչ հաղորդել ՀՀ առողջապահական համակարգի տեխնոլոգիական զարգացմանն ու կառավարման մակարդակի բարձրացմանը:

9. Առաջարկությունները

Համագործակցության վերը նշված բոլոր ուղղություններով նախատեսվում է, որ Հայաստանը և Չեխիան, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունները կոնկրետ քայլեր կձեռնարկեն ձեռք բերված պայմանավորվածություններն իրագործելու ուղղությամբ:

10. Գործուղվողները

Լևոն Ալթունյան – ՀՀ առողջապահության նախարար

Նելսոն Զուլոյան – ՀՀ առողջապահության նախարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար

11. Ստորագրությունը, ամսաթիվը

Լևոն Ալթունյան **2017թ. հուլիսի 24**